տուածատրեանց, Յովհաննէսն Դրիգորեան Շլթեանց, Մինասն Ա-լէքսանեան Խալիպեանց և Բաղդասարն Միքայէլեան Տրապիզոնցեանց:

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

6 Յուլիսի. Ըստ առաջարկութեան Առաջնորդին Ատրպատականի լուծուած է համաձայն Դաւրիժեցի Եսայի Միրզայեանցի և նորա կնոջ Աննա Մնացականեանցի պսակը: Եսայի Միրզայեանցին տրուում է իրաւունք նորից ամուսնանալու, իսկ Աննա Մնացականեանցը, որ ապօրինի և մեղանչական կենակցութեամբ ապրում է իւր հարազատ հօրեղբօր Օհան Բարսեղեան Մելիք—Աբրահամեանց Հին—Նախիջևանցու հետ և. որից ունեցել է արդէն զաւակ, կորցնում է վերստին ամուսնանալու իրաւունքը և ենթարկուում եկեղեցական բանադրանաց: Մելիք—Աբրահամեանցը ենթարկուում է քրէական պատաքննութեան ըստ 1011 յօդուածոյ:

---

16 Յուլիս. Արձակուում է Ապարանու գործակալութեան պաշտօնից, տեղի Հայ ընդհանուր ժողովրդեան բողոքի համաձայն, Ստեփաննոս քահանայ Տէր Խաչատրեանը, ենթարկուելով իւր ապօրինի և անհարազատ գործողութեանց համար պատասխանատուութեան: Նորա փոխանակ նշանակուում է գործակալ Մուղնու Ս. Գէորգ վանքի վանահայր բարեշնորհ Ղուկաս աբեղան, պահպանելով հանգերձ վանահայրութեան պաշտօնը:

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.